

ISSN 0321-0340

ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐԽԻՎՈՆԵՐԻ

85 = ԵԱԱԴՈՒԻ

N 2 (114)
2009

ԲՈՒՅՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐԽԻՎԱԿԱՆԵՐԻ

Չիտհանրամատչելի հանգու

Вестник архивов
Армении

Научно-популярный журнал

Bulletin of Armenian
Archives

Scientific practical journal

2 (114)
2009

ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ YEREVAN

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1960 ԹՎԱԿԱՆԻՑ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԻՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

Գլխավոր խմբագիր՝ Ամատունի Վիրաբյան

Խմբագրական խորհուրդ

Արմեն Բադալյան (պատասխանատու քարտուղար)

Ալբերտ Կիրիմյան, Ավագ Հարությունյան, Էմմա

Հովսեփյան, Սոնյա Միրզոյան, Աշոտ Մելքոնյան,

Արամ Սիմոնյան

© Բանբեր Հայաստանի արխիվների, 2009թ.

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1919Թ. ՀՈՒԼԻՍ)

1918թ. մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետության անկախությունից հետո նորաստեղծ կառավարությունը հայտնվեց ներքին և արտաքին դժվարին խնդիրների առջև, որոնց լուծումից էր կախված հանրապետության հետագա գոյությունը: Ի թիվս բազմաթիվ այլ խնդիրների Հայաստանի Հանրապետության կառավարությունը 1918 թվականի վերջերին ձեռնամուխ եղավ բարձրագույն ուսումնական հաստատության ստեղծման հարցի քննարկմանը, որը ավելի առարկայական տեսք ստացավ 1919 թվականին: Հայաստանի Հանրապետությունում 1918-1919 թվականներին համալսարան հիմնելը բարդ և համարձակ ձեռնարկ էր, եթե նկատի ունենանք նորաստեղծ հանրապետության ծանր վիճակը: Համալսարան հիմնելու համար նախևառաջ անհրաժեշտ էր ունենալ համապատասխան նյութական միջոցներ և մասնագետներ, որոնց սուր կարիքը իսկապես զգացվում էր: Կառավարության որոշ անդամներ, հաշվի առնելով պետության ունեցած համեստ հնարավորությունները, թերահավատորեն էին մոտենում համալսարան հիմնելու գաղափարին՝ առաջարկելով փոխարենը ստեղծել ինստիտուտ:

Հայաստանի Հանրապետությունում համալսարան հիմնելու հարցերով անմիջականորեն զբաղվելու նպատակով Հանրային Կրթության նախարարի օգնականի կողմից ընտրվեց հանձնաժողով, որի լրիվ կազմը (Յու. Ղամբարյանը և Դ.Զավրյանը, որպես համալսարանի կազմակերպիչներ՝ հավասար իրավունքներով, իսկ Մ.Բունիաթյանը, Գ.Խարազյանը, Ս.Սալխասյանը, Ռ.Աբրահամյանը, Լուռու-Մելիք-Քալանթարը, Ե.Տեր-Մինասյանը, Մ.Աբեղյանը, Ս.Տիգրանյանը, Մեսրոպ Եպիսկոպոսը, Գարեգին Եպիսկոպոսը, բժիշկ Գ.Տեր-Ներսեսովը և Մ.Սզարեուլովը որպես այդ հանձնաժողովի անդամներ) հետագայում հաստատվեց Հանրային Կրթության նախարարի առանձին գրությամբ¹: Այս հանձնաժողովը կազմակերպչական աշխատանքներ կատարեց համալսարանի հիմնադրման հետ կապված խնդիրները լուծելու համար:

Ստորև ներկայացվող փաստաթղթերից մեկը (N 1) այդ հանձնաժողովի անդամներ Դ.Զավրյանի, Մ.Աբեղյանի, և Ե.Տեր-Մինասյանի մասնակցությամբ 1919թ. հուլիսի 9-ին Երևանում Հանրային Կրթության և Արվեստի նախարար Ս.Տիգրանյանի նախագահությամբ գումարված նիստի արձանագրությունն է, իսկ մյուս երկուսը՝ (N 2 և N 3) համալսարանական հանձնաժողովի թիֆլիսում գումարած հուլիսի 26-ի և 29-ի նիստերի արձանագրություններն են: Այս փաստաթղթերը հետաքրքիր տեղեկություններ են պարունակում համալսարանի ինքնավարության հետ կապված հարցում Հանրային Կրթության և Արվեստի նախարարության և համալսարանական հանձնաժողովի միջև եղած տեսակետների տարբերության մասին, ինչպես նաև լույս են սփռում այն խնդիրների լուսաբանման վրա, որոնք կապված էին մասնագետների հրավիրման, նրանց կոչումներ կամ գիտական աստիճաններ շնորհելու, աշխատավարձ վճարելու, դասախոսների և ուսանողների կենցաղային պայմանները ապահովելու հարցերի հետ: Փաստաթղթերը, որոնք պահպանվում են ԵՊՀ պատմության թանգարանի արխիվում, հրատարակվում են որոշ ծանոթագրություններով և ուղղագրական շտկումներով: Հաշվի առնելով հրապարակվող փաստաթղթերի նմանաբովանդակությունը, վերջիններս չեն վերնագրվել:

Ժակ Մանուկյան
պատմական գիտությունների
թեկնածու

¹ «Երեանի համալսարան 1918-1920թթ, վավերագրերի ժողովածու», Եր., 1995, էջ 75-76:

9 հունիսի 1919թ.
Երևան

1919թ. յուլիսի 9-ին Երևան մայրաքաղաքում Հայաստանի Հանրապետության հանրային կրթության մինիստր պ. Ս.Տիգրանեանի նախագահությամբ և մասնակցությամբ Թիֆլիսի համալսարանական յանձնաժողովի անդամներ պ.պ. Դ.Զաւրեանի, Ս.Աբեղեանի և Ե.Տէր-Մինասեանի, այլև ներկայութեամբ մինիստրի օգնական պ. Պ.Սոտնիկեանի, պ. պ. Ա.Տէր-Պօղոսեանի և Գ.Էդիլեանի և Երևանի փոխ-քենակալ Տ.Նորեն եպիսկոպոս Մուրադբեկեանի կայացաւ նիստ՝ լսելու համալսարանական յանձնաժողովի անդամներ Դ.Զաւրեանի և Ե.Տէր-Մինասեանի զեկուցումը՝ յանձնաժողովի կատարած աշխատանքների մասին:

Ա. Ժողովը լսելով Դ.Զաւրեանի և Ե.Տէր-Մինասեանի զեկուցումը՝ Երևանում համալսարան հիմնելու գործի հանգամանքների և Թիֆլիսի համալսարանական յանձնաժողովի աշխատանքների արդյունքի մասին, եկաւ այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է համալսարանական յանձնաժողովի գործունեութեան ծանրութեան կենտրոնը տեղափոխել Երևան, թողնելով Թիֆլիսում մի բիւրօ կամ մի անձնաւորութիւն՝ հարկաւոր յարաբերութիւնների և բանակացութիւնների համար: Քանի որ Թիֆլիսի յանձնաժողովը կատարել է արդեն կարևոր աշխատանքները, հարկաւոր է նրա որոշումներն իրականացնելուն նպաստելու համար Երևանում ունենալ յանձնաժողով երկու մասից բաղկացած, որոնցից մէկը պէտք է զբաղուի ուսումնական, իսկ միւսը՝ տնտեսական խնդիրներով:

Բ. Գալով այն հարցին, թէ ո՞րտեղ պէտք է կատարեն դասախօսների ընտրութիւնը և ո՞վ է իրաւագոր այդպիսի ընտրութիւններ անելու և որոշելու, թէ ո՞վ ընտրւածներից ինչ պաշտօն է ունենալու՝ պրոֆեսորի՞, դոցենտի՞, թէ պրիւատ-դոցենտի կամ ուսուցչի, ժողովը՝ լսելով Դ.Զաւրեանի և Ե.Տէր-Մինասեանի բացատրութիւնները Թիֆլիսի յանձնաժողովի կարծիքների մասին, լաւագոյն համարեց, որ համալսարանի դասախօսների ընտրութիւնը և պաշտօնների բախշումը կատարուի միայն ևեթ լիազօր իրաւունք ունեցող մի կոլեգիայի ձեռքով, այնպիսի մի կոլեգիայի, որի անդամներն ունեն պրոֆեսորական աստիճան կամ գիտական աստիճան: Այդ լիակատար իրաւագոր կոլեգիան պէտք է այնուհետև ընտրութեամբ իւր կազմը լրացնէ, ընտրութեան ժամանակ հիմնուելով անկասկածելի տուեալների վրայ:

Հանրային կրթութեան մինիստր պ. Ս.Տիգրանեան[ը] յայտնեց, որ Թիֆլիսի համալսարանական յանձնաժողովը մի նախապատրաստական աշխատանքներ կատարող հիմնարկութիւն է և ատոնոմիայի իրաւունքներ ունենալ չէ կարող: Երբ կկազմուի իսկական իրաւագոր, գիտական աստիճաններով օժտուած մարմինը կամ ֆակուլտետը այն ժամանակ կսկսուի համալսարանական ատոնոմիան: Իսկ մինչև այն պէտք է հրաւիրել Թիֆլիսի յանձնաժողովին՝ Երևանում աշխատելու և գործը կազմակերպելու:

Գ. Անցնելով այնուհետև համալսարանական յանձնաժողովի մշակած սկզբունքներին նախահաշուի և դասախօսների ռոճիկների վերաբերութեամբ, ժողովը հնարաւոր գտաւ ընդունել մշակած սկզբունքներին ու ռոճիկների քանակը՝ ուսուցիչների համար 12 դասի համար ամսական 3000 թուրքի, պրիւատ-դոցենտներին 6 դասի համար նոյնքան, դոցենտներին (որոնք պէտք է գիտական աստիճան և գիտական աշխատանքներ ունենան) ամսական 5000 թուրքի և բնակարան կամ 6000 թուրքի առանց բնակարանի, իսկ պրոֆեսորներին՝ 25 % ավելի: Դրսի համալսարաններից յայտնի գիտնական պրոֆեսորների կարելի է հրավիրել նաև յատուկ պայմանով: Այս սկզբունքների հիման վրայ յանձնարարել համալսարան-

* Փաստաթղթի վերևի ձախ մասում դրված է կնիք՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹ.» մակագրությամբ - Ժ.Մ.:

Նախաձեռնողի անդամներ պ.պ. Դ.Զաւրեանին և Ե.Տէր-Սինասեանին նախահաշիւ կազմել և ներկայացնել Հանր.լային կրթութեան մինիստրութեան:

Նախագահ ժողովի
Անդամներ
Անդամ-քարտուղար Ե.Տէր-Սինասեան

ԵՊՀ ՊԹ արխիւ, ֆ.13, գ. 6, ք. 6 և հակ. կողմ: Բնագիր: Ձեռագիր:

N 2
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ N 9

26 հուլիսի 1919թ.
Երևան

Նախագահ
Երեւանի Համալսարանի տեսուչ պրոֆ. Ղանբարեան
Ներկայ էին՝ Դ.Զաւրեան[ը], Ս.Բունիաթեան[ը], Գ.Խարազեան[ը], Դր.Տէր-Ներսէսեան[ը] եւ Ե.Տէր-Սինասեան[ը]:

Ա. ժողովի զբաղման գլխաւոր նիւթն էր համալսարանական յանձնաժողովի Երեւան գնացած պատկերակութեան զեկուցումը իր գործունէութեան մասին: Մանրամասն զեկուցումն արին եւ ժողովին ներկայացրին Երեւանից բերած պաշտօնական փաստաթղթերը՝ պ.պ. Դ.Զաւրեան[ը] եւ Ե.Տէր-Սինասեան[ը]: (Բոլոր փաստաթղթերը՝ "Временныя правила объ Эриванскомъ Институте", "Объяснительная Записка-тезисы Министра Народнаго Просвещения ко временнымъ правиламъ объ Эриванскомъ Институте", "Временныя правила объ Эриванскомъ Университете", «Քաղուած մինիստրների խորհրդի 1919թ. յուլիսի 17-ի նիստի օրագրից», «Նախահաշիւ Երեւանի համալսարանի 1919/20 ուս[ումնական] տ[արվա] ծախսերի», «Քաղուած Մինիստրների խորհրդի 1919թ. մայիսի 16-ի նիստի օրագրից», «Երեւանի համալսարանի ժամանակաւոր կանոնները», «Յանձնաժողովի առաջարկները պրոֆեսորների, դոցենտների եւ պրիւատ-դոցենտների մասին»- կցւում են սոյն արձանագրութեանը)*:

Չեկուցումից եւ ներկայացրած փաստաթղթերից պարզուեց, որ պատուիրակութեանը յաջողւել է, մեծ դժուարութիւններից յետոյ, մինիստրների խորհրդում վճիռ կայացնել տալ, որ առաջիկայ աշնանից բացուի Երեւանի համալսարանի (ոչ ինստիտուտի, որպիսի անուն ուզում էր տալ նոր բացուող հաստատութեանը Հանրային կրթութեան մինիստր Ս.Տիգրանեանը) պատմա-լեզվաբանական եւ իրաւաբանական ֆակուլտետները: Այդ երկու ֆակուլտետների նախահաշիւը առաջիկայ 1919/20 ուս[ումնական] տ[արվա] համար արդէն հաստատուած է մինիստրների խորհրդի կողմից եւ համապատասխան վարձը՝ երկու միլիոն, երկու հարիւր յիսուն եւ ինն հազար, երկու հարիւր րուբլի գումարի, (2.259.200 ր[ուբլի]) արդէն բացուած է Հանրային կրթութեան եւ արւեստի մինիստրին: Պատուիրակութեանը չէ յաջողուել անցկացնել ռոճիկների այն չափը, որ որոշել էր համալսարանական յանձնաժողովը թիֆլիսում, բայց նրան յաջողուել է օրէնքի մէջ մտցնել, որ պրոֆեսորները պէտք է ստանան մինիստրական, դոցենտները՝ մինիստրի օգնականի եւ պրիւատ-դոցենտները՝ բաժանմունքի կառավարչի ռոճիկ - այսինքն ամենաբարձր ռոճիկները Հայաստանի հանրապետութեան մէջ: Իսկ արտասահմանի համալսարաններից յայտնի գիտնականներ հրաւիրելու դէպքում մինիստրների խորհուրդը թոյլ է տուել վճարել աւելի բարձր ռոճիկ, ամեն անգամ ստանալով մինիստրների խորհրդից յաւելեալ վարձ: Հանրային կրթութեան մինիստրը ցանկանում էր իւր նախաձեռնութեամբ ժամանակաւոր կանոնադրութիւն հաստատել տալ համալսարանի համար, որով խախտուում էր համալսարա-

* Արխիւային գործում բացակայում են վերոնշյալ փաստաթղթերը - Ժ.Մ.:

նի ինքնավարութեան սկզբունքը եւ թույլատրուում էր մինիստրի միջամտութիւնը՝ համալսարանի գործերում: Պատուիրակութեան ջանքերի շնորհիւ յաջողուեց համալսարանի կառուարութեան ժամանակաւոր կանոնների եւ մշտական կանոնադրութեան մշակումը յանձնարարել տալ համալսարանի տես[ու]չին եւ առայժմ հաստատուած են միայն մի քանի աննշանակ «ժամանակաւոր կանոններ»: Համալսարանի գործը ավելի հաստատուն հիմքերի վրայ դնելու եւ նրա հեղինակութիւնը ամեն կասկածից բարձր դարձնելու համար մինիստրների խորհուրդը հարկ տեսաւ այժմէն իսկ ունենալ լիազօր տեսուչ եւ այդ պաշտօնի համար հաստատեց համալսարանական յանձնաժողովի նախագահ պրոֆեսոր Ղամբարեանին, որին եւ իրաւունք է վերապահուած ժամանակաւորապէս հրաւիրելու պրոֆեսորներին, դոցենտներին ու պրիւատ-դոցենտներին եւ որի ղեկավարութեանն է յանձնուում առհասարակ համալսարանի կազմակերպութեան ամբողջ գործը: Խնդրի այսպիսի ձեւակերպութեան դէմ չառարկեց պատուիրակութիւնը, նրա մէջ տեսնելով համալսարանի ինքնավարութեան փրկութիւնը:

Համալսարանի համար յատկացուելու է Երեւանի ուսուցչական սեմինարիայի շինութիւնը, որի մէջ այժմ տեղաւորուած է Ամերիկական կոմիտէի հիւանդանոցը: Պատուիրակութիւնը խնդրել է Հանրային կրթութեան մինիստրին համապատասխան օրէնսդրական ակտով ապահովել այդ շէնքը համալսարանի համար եւ միջոցներ ձեռք առնել այն դատարկել տալու: Պատուիրակութիւնը հոգս է քաշել նաեւ դոցենտների բնակարանների եւ ուսանողների հանրակացարանների համար, այդ առթիւ բանակցութիւն վարելով Երեւանի քաղաքային ինքնավարութեան հետ: Քաղաքային ինքնավարութիւնը խոստացել է հոգալ մինչեւ 10 բնակարան՝ դոցենտների համար եւ հիմնել հանրակացարան՝ մինչեւ 100 ուսանողի համար:

Այսպիսով կարելի է ապահովուած համարել երկու ֆակուլտետների բացումը, իսկ բնագիտական եւ բժշկական ֆակուլտետները կարող են բացուել հետեւեալ տարին, երբ հարկաւոր նախապատրաստական աշխատանքները կվերջանան: Այդ ուղղութեամբ եւս աշխատանք է կատարուած եւ յոյս կայ, որ Երեւանի բերդի գիւնդական հիւանդանոցն ու բոլոր շէնքերը կյանձնուեն համալսարանի վարչութեանը, որով սկիզբն կդրուի բժշկական ֆակուլտետի մի քանի հաստատութիւնների: Թերեւս կարելի է յոյս ունենալ նաեւ գիմնագիայի նոր շէնքի վրայ, որ դեռ պատրաստ չէ, բայց կառավարութիւնը բաց է թողել 9 միլիոն ռուբլի՝ այն վերջացնելու համար: Այդ շէնքի յանձնաժողովի փոխնախագահ է ընտրուած Դ.Զարեանը, որ առանձին գրութեամբ խնդրել է գիմնագիայի շէնքի գիշերօթիկների մասը յատկացնել պետական հանրային գրադարանին, որ ծառայելու է նաեւ համալսարանին: Այդ ճանապարհով գուցէ հնար լինի ապագայում տէր դառնալ նաեւ ամբողջ շէնքին: Մանաւանդ որ պարլամենտի համար յատկացուելու է միայն շէնքի ճակատը, Աստաֆեան փողոցի վրայ:

Լսելով այս զեկուցումը եւ ծանօթանալով ներկայացրած փաստաթղթերի հետ յանձնաժողովը գտաւ, որ մեծ գործ է կատարուած եւ համալսարանի գործն արդէն դրուած է հաստատուն հողի վրայ եւ յայտնեց իւր խորին շնորհակալութիւնը պատուիրակութեան անդամներին եւ յատկապէս նրա նախագահ՝ Դ.Զարեանին՝ իրենց կատարած աշխատանքի համար:

Բ. Այնուհետեւ յանձնաժողովն զբաղուեց համալսարանի անձնական կազմի հարցով: Ի նկատի ունենալով մի կողմից այն հանգամանքը, որ շատերի համար էական նշանակութիւն ունի այժմ[է]ն իսկ իրենց դիրքը որոշել, միւս կողմից այն, որ ներկայումս դեռ անհնարին է վերջնական ընտրութիւններ կատարել, յանձնաժողովը որոշեց պաշտօնապէս տեղեկացնել իւր բոլոր անդամներին, որ նրանք օգոստոսի 1-ից կարող են հաշուել իրենց ծառայութեան մէջ եւ զրաւոր համաձայութիւն տալու դէպքում՝ ստանան պրիւատ-դոցենտի ռոճիկ: Սրանով սակայն չի կանխորոշուում նրանց ապագայ դիրքը համալսարանում, որը կորոշուի ընտրութեամբ մօտաւորապէս մի ամսից յետոյ, հարկաւոր միւսերն ու տեղեկութիւնները ժողովելուց յետոյ: Բարձր պաշտօն ստացողները կստանան իրենց լրացուցիչ

ռոճիկը: Այս որոշումը չի վերաբերում յանձնաժողովի բժիշկ անդամներին, որովհետև բժշկական ֆակուլտետը դեռ չի բացում:

Գ. Ջեկուցուեց ստատիստիկ Գրիգորեանի մասին: Յանձնարարուեց Ս.Բունիաթեանին ծանօթանալ նրա աշխատանքների հետ եւ իւր կարծիքը յայտնել յանձնաժողովին:

Դ. Ղարաջեանի գրւածքների հետ ծանօթանալ եւ զեկուցանել յանձնարարուեց պ.պ. Ղամբարեանին եւ Ս.Բունիաթեանին:

Ե. Ե.Ֆրանգեանի եւ Ս.Խոստիկեանի դիսերտացիաների մասին կարծիք յայտնել յանձնարարուեց պ. Գ.Խարազեանին:

Զ. Որոշուեց հետեւեալ նիստը գումարել յուլիսի 29-ին, երեքշաբթի, համալսարանի բացման եւ դասախօսների հրաւիրման մասին յայտարարութիւնների մշակելու եւ հրաւիրման պայմանները որոշելու համար:

Նախագահ

Անդամներ

Անդամ-արձանագրող **Ե.Տէր-Մինասեան***

ԵՊՀ ՊԹ արխիվ, ֆ. 13, գ. 6, ք. 8 և հակ., 8a: Բնագիր: Մեքենագիր:

N 3

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ N 10

29 հուլիսի 1919թ.

Երևան

Համալսարանական Յանձնաժողովի նիստի

նախագահ պրոֆ. Ղամբարեան

ներկայ էին պ.պ. Բունիաթեանը, Խարազեանը, Աբրահամեանը, Դ.Զաւրեանը, Ս.Մալխասեանը, եւ Ե.Տէր-Մինասեանը:

Ա. Կարդացուեց եւ վաւերացուեց նախորդ նիստի արձանագրութիւնը:

Բ. Պրոֆ. Ղամբարեանը զեկուցեց, որ ինքը կազմել է երեք կետից բաղկացած կանոններ, որոնց հիման վրայ պէտք է հրաւիրեն Երեւանի համալսարանի համար պրոֆեսորներ, դոցենտներ եւ պրիւատ-դոցենտներ: Ընթերցումից եւ մտքերի փոխանակութիւնից յետոյ այդ կանոններն ընդունուեցին հետեւեալ ձեւակերպութեամբ:

1) Պրոֆեսորի պաշտօնի համար կարող են ընտրուել այնպիսի անձինք, որոնք այդպիսի պաշտօն են կատարել կամ կատարում բոլոր եւրոպական եւ ամերիկական համալսարաններում, այլ եւ այն անձինք, որոնք մագիստրոսի կամ դոկտորի գիտական աստիճան եւ համապատասխան գիտական վաստակներ ունեն, անհրաժեշտ է նաեւ ապացուցանել բարձրագոյն դպրոցում դասաւանդելու-ընդունակութիւնը՝ փորձնական դասախօսութիւններով կամ մանկավարժական փորձառութեամբ: Գիտութեան մէջ յայտնի լինելը եւ գիտական խոշոր աշխատանքները կարող են առանց գիտական աստիճանի էլ հիմք ծառայել պրոֆեսորական պաշտօն ձեռք բերելու համար:

2) Դոցենտի պաշտօնի համար կարող են ընտրուել թէ՛ մագիստրոսի եւ դոկտորի գիտական աստիճան ունեցողները եւ թէ՛ այդ աստիճանները չունեցողները ռուսական համալսարաններում, բայց վերջիններում մագիստրանտի կամ դոկտորանտի քննութիւն բռնածները: Դոցենտի պաշտօն ստանալու համար գիտական աստիճաններին եւ յիշուած քննութիւններին հաւասար հիմք կարող են ծառայել նաեւ շատ թէ քիչ նշանաւոր գիտական երկերը, որոնք վկայական են հեղի-

* Արձանագրության սևագիր (ձեռագիր) տարբերակում դրված է Ե.Տէր-Մինասյանի ստորագրությունը, սակայն մեքենագիր տարբերակում այն բացակայում է - Ժ.Մ.:

նակի գիտական ինքնուրոյնութեան: Բոլոր դէպքերում անհրաժեշտ է վկայումն բարձրագոյն դպրոցում դասաւանդելու ընդունակութեան՝ փորձնական դասերով կամ մանկավարժական փորձառութեամբ:

3) Համալսարանում պետական ծառայութեան մէջ չհաշուող պրիւատ-դոցենտ կարող են լինել բացի պրոֆեսորի եւ դոցենտի պաշտօն ստանալու պայմաններին *համապատասխանող անձերից նաև Հայաստանի և արտասահմանի** բաժնագոյն դպրոցներն աւարտածները, եթէ նրանք որեւէ գիտական լուրջ (սովոր) աշխատանքով ապացուցել են իրենց գիտական ինքնուրոյնութիւնը: Այլ եւ բարձրաստութիւնը վկայուած է նշանաւոր գիտական աշխատանքով: Երկու դէպքում էլ անհրաժեշտ է բարձրագոյն դպրոցում դասաւանդելու ընդունակութիւն վերել յիշուած ապացոյցները:

Գ. Մ.Ա. Բունիաթեան[ը] զեկուցեց Գ.Ղարաջեանի աշխատանքների մասին.

1) Рабочее движение и Социаль-демократия на Кавказе.

2) Բանւորների պահովացումը արեւմտեան Եւրոպայում. 1894 թիւ,

Այդ աշխատանքները կրում են հրապարակախօսական եւ պատմողական բնոյթ, գրուած են լաւ լեզուով, բայց գիտական աշխատանքներ չեն. նրանցից առաջինը կարող է ծառայել իբրեւ նիւթ սոցիալ դեմոկրատիայի զարգացման պատմութեան համար Կովկասում:

Նոյն Ղարաջեանի «La Guerre actuelle et le Socialisme»** գրւածքի մասին զեկուցեց պրոֆ. Ղամբարեան[ը]: Աշխատանքը ոչ միայն գիտական չէ, այլ կարելի է ասել, հակա-գիտական է. աւելի քաղաքական պամֆլետ է եւ ազիտացիոն աշխատութիւն, լի ճրճռան բառերով, որ վկայում է, թէ հեղինակը չի հասկանում միջազգային եւ միջպետական յարաբերութիւններն ու իրերի պատմական ընթացքը:

Լսելով այս զեկուցումները Յանձնաժողովը որոշեց անընդունելի համարել Երեւանի համալսարանի համար պ. Գ.Ղարաջեանի թեկնածութիւնը որեւէ դասաւանդման պաշտօնի նկատմամբ:

Դ. Համալսարանի ղեկավար պրոֆ. Ղամբարեան[ը] եւ կազմակերպիչ պ. Դ.Զաւրեան[ը] հարց են յարուցանում առաջիկայ ուս[ումնական] տարում ունենալ ֆիզիքո-մատեմատիկական ֆակուլտետի առաջին կուրսի գէթ մէկ բաժինը:

Ժողովը ցանկալի համարելով այդ, որոշում է յանձնարարել պրոֆ. Ղամբարեանին եւ Դ.Զաւրեանին հարկաւոր աշխատանքներ ձեռնարկել այդ ուղղութեամբ:

Ե. Այնուհետեւ ժողովը զբաղւում է պրոֆեսորներ եւ դոցենտներ հրաւիրելու հարցով եւ ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ պրոֆ. Ղամբարեանը թիֆլիսի պոլիտեխնիկումի յանձնարարութեամբ մեկնում է Հիւսիսային Կովկաս եւ հարաւային Ռուսաստան այդ նպատակով. որոշում է խնդրել նրան պրոֆեսորներ եւ դոցենտներ հրաւիրել նաեւ Երեւանի համալսարանի համար, բանակցութիւններ վարելով Մսերեանի, Քանանեանի, Զիվիլիզովի, Ադոնցի, Օրբելու, Ներսիսեանների, Քեչիկեանի, Տոտոմեանի, Պատկանեանի եւ ուրիշների հետ:

Նախագահ
Անդամներ
Քարտուղար **Ե.Տէր-Սինասեան**

ԵՊՀ ՊԹ արխիւ, ֆ. 13, գ. 6, թ. 11 և հակ.: Բնագիր: Մեքենագիր:

* Այս բառերը բնագրում ավելացված են ձեռագրով - Ժ.Մ.:

** «Ներկայիս պատերազմը եւ Համայնավարութիւնը» - Ժ.Մ.:

ԱՔՐԱՅԱՍ ԿԻՍԻՔԵԿՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ 1919 -1920ԹԹ. ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հուշերի հեղինակը հայ հասարակությանը սակավ ծանոթ անուններից է, 1919-1920թթ. արցախյան իրադարձությունների ականատեսներից և ազատ, անկախ երկրամասի համար Ղարաբաղի հայության հերոսական պայքարի մասնակիցներից մեկը:

Աբրահամ Իսահակի Կիսիբեկյանը ծնվել է 1892թ. հունվարի 2-ին, Լեռնային Ղարաբաղի Վարանդայի (ներկայումս՝ Մարտունի) շրջանի Սխտորաշեն գյուղում, երկրագործի բազմաճյուղի ընտանիքում: Տարրական կրթությունը ստացել է քահանա հորեղբոր մոտ, միջնակարգ կրթությունը՝ Շուշիի թեմական դպրոցում, իսկ բարձրագույնը (մանկավարժական)՝ Բաքվում (1943-1945թթ.):

Քառասուն տարի շարունակ, սկսած 1913 թվականից, նվիրվել է մանկավարժական աշխատանքի, միաժամանակ մասնակցություն բերելով Արցախ աշխարհի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքին: Եղել է Լեռնային Ղարաբաղի հայության 1919-1920թթ. համագումարների պատգամավոր (նաև՝ առանձին միատերի քարտուղար), Արցախի հայոց ազգային խորհրդի անդամ: Նա ապրել է մինչև խոր ծերություն, կյանքի վերջին շրջանն անց է կացրել Երևանում:

Ղատելով որոշ տվյալներից՝ հուշագրությունը գրվել է 1940-ականների վերջերին: Իրադարձություններից շուրջ երեք տասնամյակ հետո Ա.Կիսիբեկյանը իր հիշողության ծալքերից վերծանել և թղթին է հանձնել արցախյան կյանքի այդ տարիների քաղաքական անցքերի մասին իր վերապրածը, տեսածն ու լսածը, խնդիր ունենալով նպաստ բերել Ղարաբաղի հայության ազատագրական պայքարի լուսաբանությանը: Կարծում ենք, այս փաստաթուղթն իր ուրույն տեղը կունենա Արցախ աշխարհի պատմությանը նվիրված տարբեր հեղինակների՝ հրապարակումների շարքում:

Ա.Կիսիբեկյանի՝ Լեռնային Ղարաբաղի 1919-1920թթ. իրադարձությունների մասին հուշագրությունը մաս-մաս նախկին ԽՍՀՄ պատմության կենտրոնական պետական արխիվ (այժմ՝ Հայաստանի ազգային արխիվ) է հանձնվել 1967 և 1969 թվականներին: «Հուշերը» առանձին հեղինակների կողմից ինչ-որ չափով օգտագործվել են գիտական աշխատանքներում, դրվագաբար հրապարակվել ժամանակի մամուլում:

Ստորև ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում Լեռնային Ղարաբաղի հայության 7-րդ և 8-րդ համագումարների աշխատանքին ու դրանց միջև ընկած ժամանակամիջոցում Արցախում տեղի ունեցած քաղաքական իրադարձություններին առնչվող հատվածները, իր իսկ՝ հուշերի հեղինակի մեկնաբանություններով:

Անշուշտ, ամեն ինչ չէ, որ «Հուշերը»-ում ստույգ են և ճշգրիտ, մասնավորապես փաստական տվյալների ու տրված գնահատականների հարցերում, ուստի և պետք է քննադատաբար օգտվել ժամանակակցի այդ վկայություններից:

Այսուհանդերձ, հեղինակի հուշ-պատմությունն անաղարտ տեսնելու մղումից դրդված՝ մենք այնտեղ որևէ միջամտություն չենք կատարել, բացառությամբ լեզվաոճական մասնակի շտկումների:

Հարկավ, Ղարաբաղի հայության յուրաքանչյուր համագումար հանդիսացել է տվյալ ժամանակաշրջանում երկրամասում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների որևէ փուլի բարձրակետը: Այդ հարցին տարբեր առիթներով անդրադարձել են մի շարք հեղինակներ: Այդուհանդերձ առանձին հարցեր դեռևս կարող են լուսաբանման, ինչի համար, կարծում ենք, օգտակար կարող է լինել նաև սույն հրապարակումը:

Տեքստային միջամտությունները ու ծանոթագրությունները տվել ենք տողատակում ու տեքստի վերջում:

Ալբերտ Կիրիմյան